# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

---

**27.01.2020թ.**

Նիստին մասնակցում էին՝ Ս. Գապոյանը, Ա. Ջանգեզուրյանը, Ա. Հովեյանը, Վ. Ավետիսյան Գ. Դաշտոյանը, Ս. Ամիրխանյանը, Ա. Մարուխյանը, Դ. Մազմանյանը, Վ. Հակոբյանը, որը ներկայացավ նիստի ընթացքում

Նիստը վարող՝ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյան

Նիստը արձանագրող՝ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

## *<u>ՕՐԱԿԱՐԳ</u>*

1. Օրակարգի հաստատման մասին:
2. Գավառ համայնքի 2020 թվականի բյուջեի քննարկման և հաստատման մասին

   /զեկ. Տ. Բրսիկյան/
3. Գավառ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 7 նիստի 125 որոշման N2 հավելվածում փոփոխություն և լրացում կատարելու մասին

   /զեկ. Տ. Բրսիկյան/
4. Գավառ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 7 նիստի 126 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին

   /զեկ. Տ. Բրսիկյան/
5. Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին

   /զեկ. Ա. Բոշյան/
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին

   /զեկ. Ա. Բաղալյան/
7. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և խանութը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին

   /զեկ. Ա. Բաղալյան/
8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և քարի մշակման արտադրամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին

   /զեկ. Ա. Բաղալյան/
9. Գավառ համայնքի Բոշնաղյան փողոց թիվ 16 հասցեի բնակելի տան մի հատվածի գործառնական նշանակությունը փոխելու մասին

   /զեկ. Ա. Բաղալյան/
10. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, օգտագործման սահմանափակումներ չունեցող, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը մրցութային կարգով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու և տարեկան վարձավճար սահմանելու մասին

    /զեկ. Մ. Մանուկյան/
11. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերը վարձակալությամբ տրամադրելու մասին

    /զեկ. Մ. Մանուկյան/

    ա/ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող 05-001-0379-0500 կադաստրային ծածկագրով, պետական սեփականություն հանդիսացող 4-րդ

կարգի 115,59877հա մակերեսով արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու մասին
բ/ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող 05-001-0803-0004 կադաստրային ծածկագրով, պետական սեփականություն հանդիսացող 4-րդ կարգի 33,09001հա մակերեսով արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու մասին
գ/ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող 05-001-0803-0003 կադաստրային ծածկագրով, պետական սեփականություն հանդիսացող 5-րդ կարգի 30հա մակերեսով արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու մասին
դ/ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 5-րդ կարգի 250,00000հա մակերեսով արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու մասին
ե/ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող ներքոնշյալ արոտավայրերը վարձակալությամբ տրամադրելու մասին:

12. Գավառ համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի հաստատման մասին:
/զեկ. Ա. Մարտիրոսյան

Հարց 1.

ՈՐՈՇՈՒՄ 1. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Գավառ համայնքի ավագանին միաձայն քվեարկությամբ որոշում է հաստատել նիստի օրակարգը:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 2.

ՈՐՈՇՈՒՄ 2-Ն ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆՍ. Ամիրխանյանը, Ա. Մարուխյանը

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 5) , 38-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետերի և , «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Գավառ համայնքի 2020 թվականի բյուջեն

   1) եկամուտների գծով՝ 798,553.354 /յոթ հարյուր իննսունութ միլիոն հինգ հարյուր հիսուներեք հազար երեք հարյուր հիսունչորս / ՀՀ դրամ, որից՝

   ա/սեփական եկամուտներ 273,318.300 /երկու հարյուր յոթանասուներեք միլիոն երեք հարյուր տասնութ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ

   բ/ Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ՝ 83,098.800 /ութսուներեք միլիոն իննսունութ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ

   2) ծախսերի գծով՝ 808,578.491.70 /ութ հարյուր ութ միլիոն հինգ հարյուր յոթանասունութ հազար չորս հարյուր իննսունմեկ դրամ 70լումա/,

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի
5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը/՝ համաձայն հատված 4-ի
6. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի

8. 2020թ–ի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 10,025.137.70 /տաս միլիոն քսանհինգ հազար մեկ հարյուր երեսունյոթ դրամ 70 լումա /, որից՝

   1) Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ՝ 10,025.137 /տաս միլիոն քսանհինգ հազար մեկ հարյուր երեսունյոթ / ՀՀ դրամ

   2) Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ՝ 0.70 /70 լումա/

9. 2020թ բյուջեի պակասուրդը ֆինանսավորվելու է տարեսկզբի ազատ մնացորդից՝ 10,025.137.70 /տաս միլիոն քսանհինգ հազար մեկ հարյուր երեսունյոթ դրամ 70 լումա /

10. Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից՝

1) 28.468 /քսանութ հազար չորս հարյուր վաթսունութ / ՀՀ դրամը ուղղվում է վարչական բյուջե 01բաժնի 3խմբի 3 դասի գործառնական դասակարգման 4212 /էներգետիկ ծառայություններ/ և 4214 /կապի ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածներին ՔԿԱԳ ծառայության կողմից չծախսված նախորդ տարվա պարտքի մարմանը, որից՝ 4212 հոդվածով 6478 /վեց հազար չորս հարյուր յոթանասունութ/ ՀՀ դրամ, իսկ 4214 հոդվածով 21.990 /քսանմեկ հազար ինն հարյուր իննսուն/ ՀՀ դրամ:

2) 125.986 /մեկ հարյուր քսանհինգ հազար ինն հարյուր ութսունվեց/ ՀՀ դրամը ուղղվում է վարչական բյուջե /Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ/ ՔԿԱԳ ծառայության կողմից չծախսված գումարը պետական բյուջե հետ վերադարձնելու համար

3) 977.388 /ինն հարյուր յոթանասունյոթ հազար երեք հարյուր ութսունութ/ ՀՀ դրամը ուղղվում է վարչական բյուջե 01բաժնի 1 խմբի 1 դասի /օրենսդիր և գործադիր մարմիններ/ գործառնական դասակարգման 4212 /էներգետիկ ծառայություններ/ , 4213 /կոմունալ ծառայություններ/ , 4214 /կապի ծառայություններ/ և 4234 /տեղեկատվական ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածներին համայնքապետարանի կողմից չծախսված նախորդ տարվա պարտքի մարմանը, որից՝ 4212 հոդվածով 660.340 /վեց հարյուր վաթսուն հազար երեք հարյուր քառասուն/ ՀՀ դրամ, 4213 հոդվածով 5933 /հինգ հազար ինն հարյուր երեսուներեք/ ՀՀ դրամ, 4214 հոդվածով 51.123 /հիսունմեկ հազար մեկ հարյուր քսաներեք/ ՀՀ դրամ իսկ 4234 հոդվածով 259.992 /երկու հարյուր հիսունինն հազար ինն հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ

4) 31 050 /երեսունմեկ հազար հիսուն / ՀՀ դրամը ուղղվում է վարչական բյուջե 01բաժնի 6 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4234 /տեղեկատվական ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածին նախորդ տարվա պարտքի մարմանը

5) 320 294 /երեք հարյուր քսան հազար երկու հարյուր իննսունչորս/ ՀՀ դրամը ուղղվում է վարչական բյուջե 01բաժնի 1 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4267 /կենցաղային և հանրային սննդի նյութեր/ տնտեսագիտական հոդվածին նախորդ տարվա պարտքի մարմանը

6) 120 000 /մեկ հարյուր քսան հազար / ՀՀ դրամը ուղղվում է վարչական բյուջե 10բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 /այլ նպաստներ/ տնտեսագիտական հոդվածին նախորդ տարվա պարտքի մարմանը, հիմք՝ 23.12.2019թ. Գավառ համայնքի ավագանու թիվ 7 նիստի 128 որոշումը

7) 8,421.951 /ութ միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար ինն հարյուր հիսունմեկ/ ՀՀ դրամը ուղղվում է ֆոնդային բյուջե նախորդ տարվա պարտքի մարմանը

11. Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ ուղղվում է ֆոնդային բյուջեի 2020 թ-ի ծախսերի ֆինանսավորմանը:

12. Ֆոնդային բյուջեի նախորդ տարվա պարտքը կազմում է 13.993.091 /տասներեք միլիոն ինն հարյուր իննսուներեք հազար իննսունմեկ/ ՀՀ դրամ, որից՝ 8,421.951 /ութ միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար ինն հարյուր հիսունմեկ/ ՀՀ դրամը ֆինանսավորվելու է վարչական բյուջեից ֆոնդային բյուջե հատկացված տարեսկզբի ազատ մնացորդից, իսկ 5.571.140 /հինգ միլիոն հինգ հարյուր յոթանասունմեկ հազար մեկ հարյուր քառասուն/ ՀՀ դրամը վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումից:

13. 08 բաժնի 4 խմբի 2 դասի /քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ/գործառնական դասակարգման 4819 /նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ տնտեսագիտական հոդվածով նախատեսված 5000000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամը նվիրատվության կարգով տրամադրել <<Նոր Բայազետ>> բարեգործական հիմնադրամին

14. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը կազմում է 92,000.000 /իննսուներկու միլիոն/ ՀՀ դրամ

15. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի բյուջեում կատարել փոփոխություններ որոնց հանրագումարը չի կարող գերազանցել հաստատված ծավալի 15 %:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 3.
ՈՐՈՇՈՒՄ 3. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ 125 ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ս. Ամիրխանյանը, Դ. Մազմանյանը

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 28) և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7) կետերի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. «Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Գավառ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 7 նիստի 125 որոշման N 2 հավելվածի տեխսպասարկման անձնակազմ բաժնում կատարել հետևյալ փոփոխությունը

   1) 26 կետում պահակի 5 հաստիքը փոխարինել 4-ով

   2) ավելացնել 26.1 կետը՝ էլեկտրիկի 1 հաստիք 89620 /ութսունինն հազար վեց հարյուր քսան/ ՀՀ դրամ պաշտոնային դրույքաչափով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ
ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 4.
ՈՐՈՇՈՒՄ 4. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ 126 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ և 36-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 28) և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7) կետերի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. «Գավառ համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը

հաստատելու մասին» Գավառ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 7 նիստի 126 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «Գավառի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ-ի

ա/ 3 կետում մատենագետի 2 հաստիքը փոխարինել 1-ով

բ/ ավելացնել 10 կետը՝ մշակման և համալրման մասնագետի 1 հաստիք 89620 /ութսունինն հազար վեց հարյուր քսան/ ՀՀ դրամ պաշտոնային դրույքաչափով:

2) Ուժը կորցրած ճանաչել «Գավառի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը

3) Հաստատել «Գավառի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի նոր հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

***ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ***

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 135000 |
| 2 | ՄԵԹՈԴԻՍՏ ՈՒՍ. ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ | 1 | 1 | 89620 |
| 3 | ՀԱՇՎԱՊԱՀ | 0.5 | 1 | 89620 |
| 4 | ԴԱՍՏԻԱՐԱԿ | 3 | 3 | 89620 |
| 5 | ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ | 3 | 3 | 89620 |
| 6 | ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺ | 1 | 1 | 89620 |
| 7 | ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՕԳՆԱԿԱՆ | 1 | 2 | 89620 |
| 8 | ԲՈՒԺՔՈՒՅՐ | 0.75 | 1 | 89620 |
| 9 | ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ | 0.75 | 1 | 89620 |
| 10 | ԽՈՀԱՐԱՐ | 1 | 1 | 89620 |
| 11 | ԽՈՀԱՐԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ | 0.5 | 1 | 89620 |
| 12 | ՀՈԳԵԲԱՆ | 0.5 | 1 | 89620 |
| 13 | ԼՈԳՈՊԵԴ | 0.5 | 1 | 89620 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | ԷՐԳՈԹԵՐԱՊԻՍՏ | 0.5 | 1 | 89620 |
| 15 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 89620 |
| 16 | ԴՌՆԱՊԱՀ | 0.5 | 1 | 89620 |
| 17 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 0.5 | 1 | 89620 |
| 18 | ՏՆՏԵՍՎԱՐ | 0,5 | 1 | 89620 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 17.5 | 23 | |

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 5.
ՈՐՈՇՈՒՄ 5. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 15 հոդվածի 3 կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42) կետի դրույթներով, նկատի ունենալով, որ ներքոհիշյալ քաղաքացիները վճարել են գույքահարկի մայր գումարները, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Զիջել նրանց գույքահարկի և հողի հարկի գծով տույժերը /հավելված 1, 2/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 6.
ՈՐՈՇՈՒՄ 6. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Թումանյան փողոց 27/1 հասցեում գտնվող Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0376-0055 կադաստրային ծածկագրով 0.0354հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0376-0055 կադաստրային ծածկագրով 0.0354հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 1242 /հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 7.
ՈՐՈՇՈՒՄ 7. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԽԱՆՈՒԹԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Դ. Մազմանյանը, Ա. Զանգեզուրյանը

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ, 66-րդ հոդվածների, <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշման դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի Բոշնաղյան փողոց 17/1 հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0384-0052 կադաստրային ծածկագրով, 0.00416հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, սահմանափակումներ չունեցող հողատարածքն և Իգիթ Մելիքի Հովհաննիսյանի կողմից կառուցված 22.80ք.մ. արտաքին /16.43ք.մ. ներիքն/ մակերեսով խանութն ուղղակի վաճառքի միջոցով ինքնակամ կառույցն իրականացրած անձին օտարելուն:

2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1ք.մ.-ի համար 1242 /մեկ հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ, իսկ խանութի 1ք.մ. համար 11700 /տասնմեկ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 8.

ՈՐՈՇՈՒՄ 8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՔԱՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ, 66-րդ հոդվածների, <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշման դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի Սայաղյան փողոց 113/1 հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0300 կադաստրային ծածկագրով 0.03454հա մակերեսով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, արտադրական գործառնական նշանակության, սահմանափակումներ չունեցող հողատարածքն և Գնել Դոլիկի Մկրտչյանի կողմից կառուցված 269.73ք.մ. արտաքին /246.84ք.մ. ներքին/ մակերեսով քարի մշակման արտադրամասը ուղղակի վաճառքի միջոցով ինքնակամ կառույցն իրականացրած անձին օտարելուն:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1ք.մ.-ի համար 1242 /մեկ հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ, իսկ քարի մշակման արտադրամասի 1ք.մ. համար 2600 /երկու հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 9. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՇՆԱՂՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 19 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Ս. Գապոյանը

Ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի դրույթներով, ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N609-Ն ու 2010 թվականի N208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N1920-Ն որոշման պահանջներով և ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի Բոշնաղյան փողոց թիվ 16 հասցեում գտնվող 0.01667հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքի վրա կառուցված 253.96ք.մ. մակերեսով /ծածկագիր 05-001-0375-0077-001/ բնակելի տան մի հատվածի 129.74ք.մ. մակերեսով շինության գործառնական նշանակությունը նշանակությունը փոխելու հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ դեղատուն կազմակերպելու համար:
2. Օրենքով սահմանված կարգով նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և համայնքի գլխավոր հատակագծում ապահովել սույն որոշումից բխող փոփոխությունները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 10.
ՈՐՈՇՈՒՄ 10. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ և ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 21) կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, ,,Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող

հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին՛՛ 2010թ. հունվարի 14-ի N16-Ն որոշման դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Համաձայնություն տալ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, օգտագործման սահմանափակումներ չունեցող 2-րդ կարգի 50հա մակերեսով, 3-րդ կարգի 200հա մակերեսով, 4-րդ կարգի 250հա մակերեսով և 5-րդ կարգի 100հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, 3-րդ կարգի 950հա մակերեսով, 4-րդ կարգի 15հա գյուղատնտեսական նշանակության խոտհարքները, 4-րդ կարգի 1500հա մակերեսով, 5-րդ կարգի 2000հա մակերեսով, 3-րդ կարգի 1200հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրերը, գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով, մինչև 2044թ. ներառյալ օգտագործման ժամկետով մրցույթով տրամադրելու վարձակալության:
2. Նշված հողատեսքերից 2-րդ կարգի մեկ հեկտար վարելահողի տարեկան վարձավճարը սահմանել 7500 /յոթ հազար հինգ հարյուր/, 3-րդ կարգի մեկ հեկտար վարելահողի տարեկան վարձավճարը՝ 6200 /վեց հազար երկու հարյուր/, 4-րդ կարգի մեկ հեկտար վարելահողի տարեկան վարձավճարը՝ 4200 /չորս հազար երկու հարյուր/, 5-րդ կարգի մեկ հեկտար վարելահողի տարեկան վարձավճարը 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ, 3-րդ կարգի մեկ հեկտար խոտհարքի տարեկան վարձավճարը՝ 3600 /երեք հազար վեց հարյուր, 4-րդ կարգի մեկ հեկտար խոտհարքի տարեկան վարձավճարը՝ 2200 /երկու հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ, 4-րդ կարգի մեկ հեկտար արոտավայրի վարձավճարը՝ 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ, 5-րդ կարգի մեկ հեկտար արոտավայրի վարձավճարը՝ 700 /յոթ հարյուր/ ՀՀ դրամ, 3-րդ կարգի մեկ հեկտար արոտավայրի վարձավճարը՝3400 ՀՀ դրամ:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 11.
ՈՐՈՇՈՒՄ 11. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 21) կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, ,,Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին՛՛ 2010թ. հունվարի 14-ի N16-Ն որոշման դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

ա/ 1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված 05-001-0379-0500 կադաստրային ծածկագրով պետական սեփականություն հանդիսացող 4-րդ կարգի 115,59877հա մակերեսով օգտագործման սահմանափակումներ չունեցող գյուղատնտեսական նշանակության արոտավայրը գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով՝ մինչև 2029 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով վարձակալությամբ տրամադրելուն

2. Վարձակալության տրամադրվող հողամասի մեկ հեկտարի համար տարեկան վարձավճարը սահմանել 2000/երկու հազար/ ՀՀ դրամ:

3. Խնդրել ՀՀ ԳԵղարքունիքի մարզպետին ՝ տալ դրական եզրակացություն:

բ/ 1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված 05-001-0803-0004 կադաստրային ծածկագրով պետական սեփականություն հանդիսացող 4-րդ կարգի 33,09001հա մակերեսով օգտագործման սահմանափակումներ չունեցող գյուղատնտեսական նշանակության արոտավայրը գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով՝ մինչև 2029 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով վարձակալությամբ տրամադրելուն

2. Վարձակալության տրամադրվող հողամասի մեկ հեկտարի համար տարեկան վարձավճարը սահմանել 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ:

3. Խնդրել ՀՀ ԳԵղարքունիքի մարզպետին ՝ տալ դրական եզրակացություն:

գ/1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված 05-001-0803-0003 կադաստրային ծածկագրով պետական սեփականություն հանդիսացող 5-րդ կարգի 30հա մակերեսով օգտագործման սահմանափակումներ չունեցող գյուղատնտեսական նշանակության արոտավայրը գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով՝ մինչև 2029 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով վարձակալությամբ տրամադրելուն

2. Վարձակալության տրամադրվող հողամասի մեկ հեկտարի համար տարեկան վարձավճարը սահմանել 700 /յոթ հարյուր/ ՀՀ դրամ:

3.Խնդրել ՀՀ ԳԵղարքունիքի մարզպետին ՝ տալ դրական եզրակացություն:

դ/1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված 05-001-0814-0003 կադաստրային ծածկագրով, պետական սեփականություն հանդիսացող 5-րդ կարգի 250,00000հա մակերեսով օգտագործման սահմանափակումներ չունեցող գյուղատնտեսական նշանակության արոտավայրը գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով՝ մինչև 2029 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով վարձակալությամբ տրամադրելուն

2. Վարձակալության տրամադրվող հողամասի մեկ հեկտարի համար տարեկան վարձավճարը սահմանել 700 /յոթ հարյուր/ ՀՀ դրամ:

3. Խնդրել ՀՀ ԳԵղարքունիքի մարզպետին ՝ տալ դրական եզրակացություն:

ե/ 1. Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող, հետևյալ կադաստրային ծածկագրերով պետական սեփականություն հանդիսացող օգտագործման սահմանափակումներ չունեցող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերը՝ գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով, վարձակալությամբ տրամադրել մինչև 2029 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի դրական եզրակացության առկայության դեպքում.

| 4-րդ կարգի արոտավայրեր | | | 5-րդ կարգի արոտավայրեր | | |
|---|---|---|---|---|---|
| կադաստրայի ն ծածկագիրը | մակերեսը | 1 հեկտարի վարձավճարի չափը | կադաստրային ծածկագիրը | մակերեսը | 1 հեկտարի վարձավճարի չափը |
| 801- | 150հա | 2000 | 814- | 300հա | 700 |
| 803- | 150հա | 2000 | | | |
| 802 | 50հա | 2000 | | | |

3. Խնդրել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին ՝ տալ դրական եզրակացություն:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 12.
ՈՐՈՇՈՒՄ 12. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Գավառ համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ